ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 52

23 նոյեմբերի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ս. Պետրոսյանի 13 հոկտեմբերի 2011 թվականի N 5097-11 գրությունը՝ մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքում 2011 թվականի օգոստոս ամսին արձանագրված թերությունների և բացթողումների վերաբերյալ տեղեկատվությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի 5-րդ կետի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Ամբողջությամբ ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից Մարալիկ համայնքում 2011 թվականի օգոստոս ամսին իրականացված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2011 թվականի օգոստոսի 9-ի տեղեկանքում արձանագրված թերություններն ու բացթողումները և դրանց վերացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ 2011 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 5097-11 գրությամբ ներկայացված առաջարկությունները:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքում իրականացված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքում արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու վերաբերյալ միջոցառումների ժամանակացույց՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Մարալիկ համայնքի ղեկավար Ա. Գևորգյանին.
   հաստատված միջոցառումների ժամանակացույցին համապատասխան միջոցներ ձեռնարկել Մարալիկ համայնքում իրականացված վարչական և ֆինանսական հսկողության

արդյունքների վերաբերյալ կազմված 2011 թվականի օգոստոսի 9-ի տեղեկանքում նքում արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ:

4. Որոշման կատարման ընթացքում անդրադառնալ համայնքի ավագանու առաջիկա հերթական նիստին:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավար Ա. Գևորգյանի վրա:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

23 նոյեմբերի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 53

23 նոյեմբերի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻՆ ՀԱԿՏԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Քաունթերփարթ ինթերնեշնլ կազմակերպության կողմից հատկացված քաղաքացիական նախաձեռնությունների և համայնքային զարգացման դրամաշնորհային ծրագրով մինչև 1700000 (մեկ միլոն յոթ հարյուր հազար) դրամի չափով համայնքային ենթակայության արվեստի դպրոցին հատկացված տարածքների վերանորոգման նախաձեռնությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ և աջակցել ներկայացված ծրագրին և կատարել ներդրում Քաունթերփարթ ինթերնեշնլ կազմակերպության ներդրած դրամաշնորհի 25 %-ի չափով (դրամական և ոչ դրամական)՝ անհրաժեշտ համարելով արվեստի դպրոցի սենյակների վերանորոգումն և միջնորմերով կիսումը, բեմի մեծացումը, մասնակի ջեռուցումը, դահլիճի հատակի լամինացումը:
2. Տարածքը տրամադրել անհատույց, օգտագործել նպատակային և հինգ տարվա ընթացքում չօտարել:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

23 նոյեմբերի 2011 թվական

ք. Մարալիկ